ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/7437-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-160-10.02.2022-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 261-Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (160-10.02.2022-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի նախագիծ) համաձայն առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետային պարտադիր» բառերը հանել և լրացնել «երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաների,» բառերով:

Նախագծին կից ներկայացված հիմանվորման համաձայն՝ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է պետության կողմից երաշխավորված պետական բյուջեի միջոցների հաշվին ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն և պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը և ուսումնառությունը: Օրենքում իրավակարգավորման բացակայության պայմաններում զինվորական ծառայության ընթացքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ստացած պայմանագրային զինծառայողները, այդ թվում՝ սպաները, զրկված են անվճար կրթություն ստանալու իրավունքից: Այս իրավիճակում ծառայությունից արձակված պայմանագրային զինծառայողը կանգնում է լրջագույն խնդրի առջև՝ համապատասխան մասնագիտության բացակայությունը կամ միայն ռազմական կրթության առկայությունը խոչընդոտում է այլ աշխատանքի տեղավորմանը, և արդյունքում զինծառայողը, բախվելով ծանր սոցիալական խնդիրների հետ և չտեսնելով դրանց լուծման հնարավորություն, սկսում է մտածել երկրից դուրս գալու մասին: Պայմանագրային զինծառայողների հետ հանդիպումներում ևս զինծառայողներն ընդգծում են պետական բյուջեի հաշվին կրթություն ստանալու և

քաղաքացիական մասնագիտություն ձեռք բերելու հնարավորության բացակայությունը, որն այլ աշխատանք գտնելու տեսանկյունից կարևոր նշանակություն կունենար: Նույն խնդրին բախվում են նաև երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցած սպաները, ովքեր երբեմն նույնիսկ մի քանի տեղ են ստիպված աշխատում, որպեսզի կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները և չընտրեն արտագաղթի ճանապարհը: Նման անձանց համար անվճար կրթություն ստանալու իրավունքի երաշխավորումը հնարավորություն կստեղծի, որ վերջիններս ավելի դյուրին հարմարվեն քաղաքացիական կյանքին, ձեռք բերեն քաղաքացիական մասնագիտություն և ներգրավվեն հանրային կյանքի տարբեր բնագավառներում: Առաջարկվող փոփոխությունը նաև բխում է ՀՀ կառավարության ծրագրի՝ պաշտպանությանը վերաբերող գլխի դրույթներից, որտեղ խնդիր է դրված բարձրացնել զինվորական մասնագիտության գրավչությունը:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն նախատեսվում է իրականացնել օրենսդրական բնույթի և գործնական քայլեր՝ զինվորական ծառայության և զինվորական մասնագիտություն ընտրելու գրավչության բարձրացման ուղղությամբ, որոնցից է հանդիսանում նաև զինծառայողների կրթական երաշիքների ընդլայնումը: Այդ ուղղությամբ անհրաժեշտություն է հանդիսանում նաև օրենքով սահմանված պետական բյուջեի միջոցների հաշվին կրթություն ստանալու երաշխիքները, բացի ծառայողական պարտականությունների կատարման շրջանակներում համապատասխան կարգավիճակ ստացած անձանց, տարածել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող պայմանագրային զինծառայողների վրա:

Ինչ վերաբերում է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին սպաների համար ևս անվճար կրթական երաշխիք սահմանելուն, ապա օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ որպես զինծառայողների լրացուցիչ երաշխիք է սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով զինված ուժերից արձակված նախկին զինծառայողների համար պետության կողմից ֆինանսավորվող մասնագիտական վերապատրաստման ծրագրերում

առաջնահերթության կարգով ընդգրկվելու իրավունքը: Այդ առումով, Կառավարությունը գտնում է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով զինված ուժերից արձակված նախկին զինծառայողների (ներառում է նաև սպայական կազմը) համար օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված երաշխիքը բավարար միջոց է նրանց կողմից քաղաքացիական մասնագիտություն ձեռք բերելու և հանրային կյանքի տարբեր բնագավառներում ներգրավելու համար, որի կապակցությամբ առաջարկում ենք ձեռնպահ մնալ օրենքի 67-րդ հոդվածում երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով զինված ուժերից արձակված սպայական կազմի նախկին զինծառայողների մասով լրացում կատարելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում «փոփոխություն և լրացում» բառերը փոխարինել «փոփոխություն» բառով.

2) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս» բառերը փոխարինել «ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով» բառերով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 261-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-160-10.02.2022-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Պ-160-10.02.2022-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետային պարտադիր» բառերը հանել, «նախկին զինծառայողների,» բառերից հետո լրացնել «երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաների,» բառերը եւ կետադրական նշանը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաեւ զոհված (մահացած) զինծառայողների մինչեւ 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն եւ պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը եւ ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Սակայն զինվորական ծառայության ժամանակ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ստացած պայմանագրային զինվորական ծառայողները, այդ թվում՝ սպաները, զրկված են անվճար կրթություն ստանալու իրավունքից:

Օրենքում համապատասխան իրավակարգավորման բացակայության պայմաններում առկա է այնպիսի իրավիճակ, որ պայմանագրային զինծառայողը, այդ թվում՝ սպան, որը ներգրավված է մեր երկրի պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության ապահովման գործում, ստանալով 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության կարգ, եւ շատ դեպքերում հաշմանդամության պատճառով շարքից դուրս գալով եւ արձակվելով զինվորական ծառայությունից, զրկված է պետական բյուջեի հաշվին կրթություն ստանալու հնարավորությունից:

Այս իրավիճակում ծառայությունից արձակված պայմանագրային զինծառայողը կանգնում է լրջագույն խնդրի առջեւ. համապատասխան մասնագիտության բացակայությունը կամ միայն ռազմական կրթության

առկայությունը խոչընդոտում է այլ աշխատանքի տեղավորմանը, եւ արդյունքում զինծառայողը, բախվելով ծանր սոցիալական խնդիրների հետ եւ չտեսնելով իրավիճակից դուրս գալու գոնե տեսական հնարավորություն, սկսում է լրջորեն մտածել երկրից հեռանալու մասին:

Հավելենք, որ պետական բյուջեի հաշվին համապատասխան կարգավորման բացակայության եւ ներկա սոցիալական իրականության պայմաններում պայմանագրային զինծառայողները դժվարանում են առօրյա ծախսերի հետ մեկտեղ իրենց հաշվին ստանալ կրթություն եւ քաղաքացիական մասնագիտություն:

Պայմանագրային զինծառայողների հետ տեւական հանդիպումների ժամանակ խնդրի քննարկման շրջանակներում զինծառայողները հատկապես ընդգծում են լրացուցիչ հնարավորության բացակայության խնդիրը այն առումով, որ հաշմանդամության ձեռքբերման արդյունքում ծառայությունից դուրս գալու պայմաններում զրկված են պետական բյուջեի հաշվին կրթական իրավունքի իրացումից եւ քաղաքացիական մասնագիտություն ձեռք բերելու հնարավորությունից, որն այլ աշխատանք գտնելու տեսանկյունից կարեւոր նշանակություն կունենար:

Կրթություն ստանալու երաշխիքը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաների համար սահմանելը պայմանավորված է նրանով, որ շատ դեպքերում զինծառայողները երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք են ձեռք բերում 37-38 տարեկանում: Այսինքն, այդ պահից սկսած վերջիններս կարող են այլեւս չերկարաձգել իրենց պայմանագրերը եւ հաշվառվել պահեստազորում: Նման անձանց համար անվճար կրթություն ստանալու իրավունքի երաշխավորումը հնարավորություն կստեղծի, որ վերջիններս ավելի դյուրին հարմարվեն քաղաքացիական կյանքին, ձեռք բերեն քաղաքացիական մասնագիտություն եւ ներգրավվեն հանրային կյանքի տարբեր բնագավառներում:

Հաշվի առնելով, որ զինվորական ծառայությունից դուրս եկած՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերած զինծառայողները երբեմն նույնիսկ մի քանի տեղ են ստիպված աշխատել, որպեսզի կարողանան հոգալ իրենց եւ իրենց ընտանիքի կարիքները եւ չընտրեն արտագաղթի ճանապարհը, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողներին պետական բյուջեի հաշվին ուսումնառության հնարավորության ընձեռումը ձեռք է բերում արդիական հնչեղություն:

Առաջարկվող փոփոխությունը նաեւ բխում է ՀՀ կառավարության ծրագրի՝ պաշտպանությանը վերաբերող գլխի դրույթներից, որտեղ խնդիր է դրված բարձրացնել զինվորական մասնագիտության գրավչությունը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջանում Օրենքում կատարել համապատասխան փոփոխություն եւ լրացում՝ պայմանագրային զինծառայողների, այդ թվում նաեւ սպաների, ինչպես նաեւ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաների համար ընձեռելով ՀՀ-ում գործող հավատարմագրված բարձրագույն եւ պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ՀՀ պետական բյուջեի հաշվին ընդունելության եւ ուսումնառության հնարավորություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել դրույթ, որի համաձայն ՀՀ-ում գործող հավատարմագրված բարձրագույն եւ պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ՀՀ պետական բյուջեի հաշվին ընդունելության եւ ուսումնառության իրավունք կտրվի՝

1. զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած բոլոր զինծառայողներին,

2. երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաներին:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանի կողմից:

3. Նախագծի ընդունման նպատակը եւ ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ նպատակ է հետապնդվում նպաստել զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած բոլոր զինծառայողների, ինչպես նաեւ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սպաների՝ պահեստազոր տեղափոխված զինծառայողների նոր մասնագիտացման ձեռքբերմանը եւ քաղաքացիական կյանքին ավելի հեշտ հարմարվելուն, սոցիալական խնդիրների առաջացման կանխարգելմանը՝ արդյունքում հասնելով նշված զինծառայողների արտագաղթի հավանականության նվազեցմանը: